

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՆՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«.....» 2019թ. թիվ

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՆՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ 2017
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-Ի ԹԻՎ 9 ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԿԱՐԳՈՒՄ
ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի 7-րդ կետը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի 2017 թվականի մարտի 2-ի՝ «Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հատուցման գումարների վճարման կարգը հաստատելու վերաբերյալ» որոշմամբ հաստատված՝ Հատուցման գումարների վճարման կարգը (այսուհետ՝ Կարգ) լրացնել 9-14 կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«9. Այն դեպքում, երբ համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման կողմից ստացած փաստաթղթերից պարզ է դառնում, որ շահառուների ցանկը ամբողջական չէ և բացակայում են հնարավոր շահառու(ներ)ին որպես շահառու ճանաչելու կամ

շահառուների ցանկից հանելու մասով իրավական փաստաթղթավորումը, ապա Հիմնադրամը.

- 1) սույն կարգի 1-ին մասով սահմանված կարգով և ժամկետներում ուսումնասիրում է առկա փաստաթղթերը և կայացնում որոշում՝ տվյալն պահին Հիմնադրամ ներկայացված անձանց շահառու ճանաչելու և իրենց հասանելիք հատուցման գումարը փոխանցելու վերաբերյալ,
- 2) որոշումը կայացնելուց հետո, Հիմնադրամը Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված միանվագ գումարը (առկայության դեպքում) փոխանցում է շահառու(ներ) ճանաչված անձանց համար բացված բանկային հաշվին, կատարում է Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերում նշված հավասարաչափ վճարումներով և Օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասում նշված վճարման ենթակա գումարներից առաջին վճարումը՝ առանձնացնելով և չվճարելով շահառու չճանաչված սակայն հնարավոր շահառուներին հատկացվելիք գումարը,
- 3) կասեցնում է հնարավոր շահառուներին հատկացվելիք հատուցման գումարի վճարումը որոշման պահից սկսած 6 ամիս ժամկետով,
- 4) 2 աշխատանքային օրվա ընթացքում դրա մասին տեղեկացնում է համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանմանը՝ շահառուներին այդ մասին տեղեկացնելու և հնարավոր շահառուների մասին տեղեկատվություն տրամադրելու պահանջով,
- 5) պաշտոնական կայք էջում հրապարակում է հատուցման դեպքի մասին տեղեկատվություն՝ նշելով զինծառայողի անուն, ազգանուն, հայրանունը, ծննդյան և դեպքի տարեթիվը, ամիսը և օրը, ինչպես նաև հատուցման գումարի չափը:

10. Վեց ամսյա ժամկետում հնարավոր շահառուին շահառու ճանաչելու համար հիմք հանդիսացող փաստաթղթերը Հիմնադրամ ներկայացնելու պարագայում, սույն կարգի 1-ին մասում սահմանված կարգով և ժամկետում Հիմնադրամն ուսումնասիրում է փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում վերահաշվարկում մինչ այդ պահը տվյալ շահառու(ներ)ին հասանելիք չվճարված ամբողջ գումարը և կատարում վճարում շահառուի համար բացված բանկային հաշվին: Այդ պահից սկսված պարբերական վճարումները կատարվում են ըստ նոր շահառուների ցանկի:

12. Վեց ամսյա ժամկետում հնարավոր շահառուի ի հայտ չգալու և Հիմնադրամին վերջինիս որպես շահառու ճանաչելու մասին տեղեկատվություն չուղարկելու, կամ հնարավոր շահառուին շահառուների ցանկից հանելու համար հիմք հանդիսացող փաստաթուղթ ուղարկելու պարագայում՝ Հիմնադրամը վերահաշվարկում է մինչ այդ պահը չվճարված ամբողջ գումարը այդ պահին շահառու ճանաչված անձանց թվի վրա հավասարաչափ բաժանելու համար: Վերահաշվարկվում է նաև այդ պահից հետո պարբերական վճարումների գումարը և հավասարաչափ բաժանվում շահառու ճանաչված անձանց թվի վրա:

13. Վեց ամսյա ժամկետի ավարտից հետո հնարավոր շահառուի մասին Հիմնադրամին տեղեկատվությունն ուղարկելու պարագայում շահառու ճանաչելու և հատուցման գումար վճարելու կարգը սահմանվում է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին Կառավարության 2017թ.-ի փետրվարի 2-ի թիվ 86-Ն որոշմամբ:

14. Այն դեպքում, երբ հնարավոր շահառուին որպես շահառու ճանաչելու կամ շահառուների ցանկից հանելու հիմքը հաստատելու համար առկա է դատական վարույթ, ապա 9-րդ մասի 3-րդ կետով սահմանված ժամկետը չի գործում, և տվյալ շահառուների մասով վճարումների կասեցումը շարունակվում է մինչև դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**«Զինծառայողների կյանքին կամ առողջությանը
պատճառված վնասների հատուցման» հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի նախագահ՝**

Դավիթ Տոնոյան